

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 15

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Մ. Դատումյանը, Տ. Գալստյանը, Գ. Թադևոսյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ն. Անդրեասյանը, Գ. Սուքիասյանը, Ս. Օվոյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալները, մամուլի քարտուղար Ս. Ասիլյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Հ. Բաղդասարյանը, աշխատակազմի բաժինների պետերի պաշտոնակատարներ:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին:

/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին:

/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Հարկային արտոնություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Ջեկուցող՝ Ս. Սահակյան/

7. Լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման միջանկյալ հաշվեկշիռները հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Համայնքային սեփականություն հանդիսացող խորքային հորերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

9. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

10. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

11. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

12. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան և Արագածոտն բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

13. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

14. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

15. Աշտարակ համայնքի Ագարակ գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Թումասյան/

16. Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Մխիթարյան/

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց հաստատել Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում նախատեսվող փոփոխությունները:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության արդյունքում հնարավորություն է ստեղծելու ապահովել բյուջեի ծախսային մասում ներկայումս առաջացած անհամապատասխանությունները:

Բարձրացված հարցերին Շ. Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 38 հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, ի գիտություն ընդունել 2022 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով 2022թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերի, <<Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 5-րդ կետերի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ համայնքի 2022թ. տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի միջոցներից 135մլն դրամի չափով, ըստ անհրաժեշտության, ուղղել վարչական բյուջե՝ տարբեր բնագավառներում առաջացած ծախսերի ֆինանսավորման համար:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Հարկային արտոնություն տալու մասին

Օրակարգի հաջորդ հարցը ևս ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> օրենքի 10-րդ հոդվածի, ՀՀ հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն՝ համաձայն հավելվածի:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ԶԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով՝

1. Աշտարակ համայնքի ավագանու 11.04.2022թ. N 49-Ա որոշման 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ <<1. Համայնքային սեփականություն հանդիսացող գրքերն անվճար, անհատույց սեփականության իրավունքով տրամադրել դպրոցներին, նախադպրոցական ուսումնական հաստատություններին և այլ կազմակերպություններին>>:

2. Աշտարակ համայնքի ավագանու 01.02.2022թ. N 6-Ա որոշման 1-3, 5-17 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

3. Աշտարակ համայնքի ավագանու 10.06.2022թ. N 85-Ա որոշման 1-ին պարբերության <<օգոստոսի 1-ից>> բառերը փոխարինել <<սեպտեմբերի 1-ից>> բառերով:

4. Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման Հավելված 1-ի 4-րդ մասի <<51 939 000>> թվերը փոխարինել <<51 929 000>> թվերով:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - Լուծարային գործընթացում գտնվող համայնքային ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման միջանկյալ հաշվեկշիռները հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով << քաղաքացիական օրենսգրքի 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Աշտարակ համայնքի ավագանու 11.04.2022թ. N 47-Ա որոշումը և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարային գործընթացի ապահովման նպատակով ստեղծված լուծարման հանձնաժողովների կողմից կազմված լուծարման միջանկյալ հաշվեկշիռները, հաստատել <<Աշտարակի կոմունալ ծառայություն>> և <<Կարբի համայնքի կոմունալ ծառայություն>>

համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների լուծարման միջանկյալ հաշվեկշիռները:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Համայնքային սեփականություն հանդիսացող խորքային հորերն անհատույց օգտագործման տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համայնքային սեփականություն հանդիսացող, Ոսկեհատ և Օշական բնակավայրերում գտնվող խորքային հորերն անհատույց օգտագործման տրամադրել <<Արագածոտն>> ՋՕԸ-ին, վերջինիս հետ կնքելով համապատասխան պայմանագիր: Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օփոյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով դիմումները, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող մի շարք հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել: Ջեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Հարցի շուրջ լրացուցիչ պարզաբանումներ ներկայացրեց համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 10 - Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7 հոդվածի 15-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի պահանջներով, համաձայնություն տալ քաղաքացիների և իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող որոշ հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելուն:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Յ Ի Ն - 11 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, ուղղակի վաճառքով օտարել Աշտարակ համայնքի բնակավայրերում առկա հողատարածքը:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 12 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Սաղմոսավան և Արագածոտն բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումայանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունները՝ հաստատել Աշտարակ համայնքի Սաղմոսավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-093-0007-0202 ծածկագրով 0,1հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0,0779հա արոտավայրի նպատակային նշանակությունը բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխությունը՝ հասարակական նշանակության շենք-շինություններ կառուցելու նպատակով և Աշտարակ համայնքի Արագածոտն բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, <<ԲԱՐԻ ԱՐԵՎ>> ՍՊ ընկերության սեփականությունը հանդիսացող 02-017-0139-0034 ծածկագրով 4,15072հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր, էներգետիկայի գործառնական նշանակության փոփոխությունը՝ արևային ֆոտովոլտային կայան կառուցելու նպատակով: Նշված փոփոխությունները սահմանված կարգով ներառել համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում:

Բարձրացված հարցերին համայնքի ղեկավարի և զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 13 - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումայանը և

առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 22.12.2009թ. N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-33 եզրակացությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 31 կետի և ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման պահանջներով, հաստատել ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Ագարակ, Աղծք, Անտառուտ, Բյուրական, Ոսկեհատ, Ոսկեվազ, Սասունիկ (Կարին), Տեղեր, Օշական, և Օրգով բնակավայրերը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արագածոտն-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 14 - Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերի նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի և համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով, հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 15 - Աշտարակ համայնքի Ագարակ գյուղում 2021թ. կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող գազատարի հատվածներն անհատույց օգտագործման իրավունքով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին շահագործման հանձնելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Թումասյանը և առաջարկեց, Աշտարակ համայնքի Ագարակ գյուղի N N 13, 19, 20, 24 փողոցներում, 2 փողոց 6 փակուղում, 1 փողոց 1 փակուղում, 18 փողոց 3 փակուղում, 12 փողոց 1 նրբանցքում 2021թ. կառուցված գազատարի հատվածների շահագործումն իրականացնելու նպատակով, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 17 հոդվածի 21 կետի պահանջներով համաձայնություն տալ՝ համայնքային սեփականություն հանդիսացող Ագարակ գյուղում 2021թ.կառուցված d=42-108մմ, L=135գ/մ (անշարժ գույքի սեփականության իրավունքի N 08072022-02-0007 վկայականով 1178,12 գ/մ) 14,901500 դրամ արժեքով գազատարներն անհատույց օգտագործման իրավունքով, շահագործման նպատակով <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ-ին հանձնելու և համապատասխան պայմանագիր կնքելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 16 - Ծառահատում կատարելու թույլտվություն տալու մասին

Օրակարգի վերջին հարցը ներակայացրեց համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի պաշտոնակատար Ս. Մխիթարյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ծառահատում կատարելու վերաբերյալ դիմումները, հաշվի առնելով համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի եզրակացությունը, ղեկավարելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 15-րդ կետի, 51-րդ հոդվածի 1-ին կետի և 18-րդ հոդվածի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Աշտարակ քաղաքի Վ. Համբարձումյան 5/1 հասցեում գտնվող, քաղաքացիների համար վտանգ ներկայացնող ծառերը կտրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2022 թվականի հուլիսի 27-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

- ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ _____
- ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ _____
- ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ _____
- ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ _____
- ՄԵՐԻ ԴԱՏՈՒՄՅԱՆ _____
- ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ _____
- ԳԱԼՈՒՍՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____
- ԱՐՏԱՇԵՍ ԽԱԶԱՏՐՅԱՆ _____
- ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ _____
- ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____
- ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ _____
- ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ _____
- ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ _____
- ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ _____
- ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ _____
- ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ